

5. **Արիստոտելեան դպրոցը**, որ կոչուած է՝ Պերիպատոս (յուն.՝ peripatos, կը նշանակէ՝ ճեմարան): Արիստոտել, 17 տարիներ Ակադեմիայի մէջ, ապա Պլատոնի աշակերտելէ եւ ապա այնտեղ դասաւանդելէ ետք, 335-ին մ.թ.ա. Աթենքի մէջ, կը հիմնէ իր դպրոցը: Այս դպրոցը կը գոյատեւէ աւելի քան 6 դար: Կը փակուի մեր թուարկութեան 3-րդ դարուն:



Փիլիսոփայութեան պատմութեան մէջ, մեծ կարեւորութեամբ կը ներկայանան նաեւ՝ Պլատոն եւ Արիստոտել:

Պլատոնի փիլիսոփայութեան հիմքը կը կազմեն իր «Գաղափարի տեսութիւնը», «Քաղաքական տեսութիւնը» եւ «Բարոյագիտութիւնը»: Իր անունով գոյութիւն ունի փիլիսոփայական ուղղութիւն մը՝ *Պլատոնականութիւնը* (Platonism), որ մինչեւ այսօր հետեւորդներ ունի: Պլատոն, խորհրդածելու միջոցով ճանաչողական հմտութիւնը կոչած է *դիալեկտիկա* (յուն.՝ dialektikê), որ հասկացութիւններու դասակարգման, ինչպէս նաեւ երկխօսութեան ու վիճաբանութեան հմտութիւնն է: Պլատոն, իր աւելի քան 30 երկերը, գրած է առաւելաբար երկխօսութեան եւ զրոյցի ձեւով: Սկզբնական շրջանի իր երկերուն մէջ նկատելի է Սոկրատեսի գերակշիռ ներկայութիւնը:

Արիստոտելի փիլիսոփայութիւնը համայնագիտական է: Իր անունով գոյութիւն ունի փիլիսոփայական ուղղութիւն մը՝ *Արիստոտելականութիւնը* (Aristotelism): Արիստոտել հիմնադիրն է փիլիսոփայական զանազան ճիւղերու եւ տեսութիւններու, որոնք նաեւ ներկայ ժամանակներուն յոյժ կիրառելի ու մեծապէս ազդեցիկ են, ինչպէս օրինակ՝ բարոյագիտութիւնը (Ethics), ձեւական տրամաբանութիւնը (Formal Logic), քաղաքական ուսմունքը (Politics) եւ ստորոգութեան (կատեգորիաներու, յուն.՝ kategoria) ուսմունքը: Արիստոտել մեծ ազդեցութիւն ունեցած է մանաւանդ միջնադարեան դպրական (Scholasticism) փիլիսոփայութեան վրայ:



Հնադարեան (Աստիկ) եւ Միջնադարեան ժամանակներուն, բարոյագիտութիւնը կը կողմորոշուէր բնագանցական, անհատական եւ հոգեբանական երեւոյթներով: Այլ խօսքով՝ որոշ առաքինութիւններու տէր ըլլալը եւ անոնց անսալը բարոյական ճիշդ վարմունք կը նշանակէր. այս ձեւով ան կը ներկայանար անհատական լաւ ու յաջող կեանքի մը պատկերացումով, յաճախ օրինակելի տիպարներով եւ առաջնորդող կեանքի իտեալի՝ երանութեան իրագործումով:

Հնադարեան եւ Միջնադարեան ժամանակներուն, բարոյագիտական նիւթեր կը գտնենք գրականութեան մէջ, ինչպէս նաեւ առակներու, նմանաբանութիւններու եւ այլաբանութիւններու մէջ: